

Սահմանափակ թվեր

Բնական թիվը կանվանենք սահմանափակ, եթե նրա մեջ չկա թվանշան, որ կրկնվում է 3 կամ ավելի անգամ: Օրինակ 152233 թիվը սահմանափակ է, իսկ 1122275 թիվը ոչ, քանի որ 2 թվանշանը հանդիպում է 3 անգամ:

Տրված է երկու թիվ՝ A և B ($A \leq B$): Անհրաժեշտ է գտնել $[A, B]$ միջակայքին պատկանող սահմանափակ թվերի քանակը:

Մուտքը

Մուտքի միակ տողում գրված են A և B թվերը ($1 \leq A \leq B \leq 10^{18}$):

Ելքը

Պետք է արտածել մի թիվ՝ սահմանափակ թվերի քանակը:

Օրինակ

Մուտք.

1 100

Ելք.

100

Մուտք.

1 1000

Ելք.

990

Խնդիրը պատրաստել են Ռոբերտ Դավթյանը և Հրայր Հարությունյանը